

ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ոչ մէկ յեղափոխութիւն իրագործուած է առանց յեղափոխական խօսքի: Իսկ յեղափոխական խօսքը ժողովուրդին մէջ տարածելու, ժողովուրդը յեղափոխականացնելու, անոր հոգին ամրացնելու եւ զայն մարտի մղելու ամէնէն ազդու միջոցներէն մէկը արուեստն է: Արուեստի ընձեռած գեղագիտական հաճոյքը անփոխարինելի է՝ իր տպաւորելու եւ ներագրելու ուժակալութեամբ:

Որովհետեւ արուեստագէտը առհասարակ իր ժողովուրդին եւ իր միջավայրին գեղագիտական թարգմանը կը հանդիսանայ,

Որովհետեւ արուեստագէտը իր գերզգայուն հանգամանքով բնատուր ձիրքը ունի խորանալու իրերու եւ երեւոյթներու խորքը,

Որովհետեւ արուեստագէտը իր իրաւութեամբ չի կրնար կամ առնուազն պէտք չէ դաւաճանէ իր արեան ձայնին,

Որովհետեւ արուեստագէտը ժամանակէն առաջ անցնելով ապագան տեսնելու կարողութիւնը ունի, կամայ-ակամայ, առաւել կամ նուազ շարժում ան կը ցորացնէ ժամանակի շունչն ու ոգին եւ կը կանխէ զայն:

Հայաստանի անկախ Հանրապետութիւնը մէկ անգամէն ծնունդ շառաւ, այլ նախապատրաստուեցաւ երկար տարիներու ընթացքին եւ գծնդակ պայմաններու մէջ: Արուեստներուն, Բաֆֆիներուն եւ Միամանթոններուն զուգահեռ՝ իրենց շինիչ եւ գործոն մասնակցութիւնը բերին նաեւ հայ գեղանկարիչներէն շատեր, որոնցմէ կը ներկայացնենք անոնք՝ որոնք համեմատաբար աւելի նպաստեցին յեղափոխական գաղափարին տարածման:

մէջ: Ընտանիքի չքաւորութեան պատճառաւ փոքր տարիքին կը ստիպուի աշխատիլ տեղւոյն յունական սրճարանին մէջ, իրրեւ մատուցող եւ երաժիշտ-լուծակահար: Հայրը, Գէորգ Այվազը, իր Օննիկին, Յովհաննէսին հայեցի կրթութիւն տալու համար կը հանէ գործէն ու կը դրկէ Թէոդոսիոյ Հայկական ծխական դպրոցը: Փոքրիկ Յովհաննէսը իր ազատ ժամերուն եւ երբեմն ալ նոյնիսկ դպրոցէն փախչելով կ'երթար ծովափ, իր ամենասիրած վայրը, ձկնորս մեծահասակ ընկերներուն քով, որոնց արկածախից կեանքն ու անոնց պատմած հետաքրքրական պատմութիւնները թափ կու տային իր երեւակայութեան, խոր հետք ձգելով իր մանուկի հոգիին վրայ: Մովն ու ծովային կեանքը այնքան արագ կը տպաւորեն զինք, որ կը սկսի ածուխով ծովանկարներ գծել քաղաքի ճերմակ պատերուն վրայ:

Օտարները ընդհանրապէս Այվազովսկին կը համարեն ուսու նկարիչ: Աւելի տեղեակ եւ բարեացակամ գտնուող կենսագիրներ զայն կը ներկայացնեն միայն ծագումով հայ նկարիչ: Սակայն Այվազովսկին ոչ միայն ծագումով հայ է, այլեւ ծնած, ապրած, գործած նաեւ ստեղծագործած է իրրեւ հայ, իր կեանքի ընթացքին: Ան եթէ ինքզինք լի-իրաւ հայ չզգար, անմիջապէս չէր արձագանգեր 1895ի Հայկական կոտորածներուն, նկարելով «Հայերու ցարդը Տրապիզոնի մէջ», «Հայերը մաւ կը լեցնեն», «Հայերը կենդանի կը մտնեն ծով», ու նմանօրինակ այլ կտաւներ: Այս առիթով, ան Նորիմեան Հայրիկին ուղղուած նամակի մը մէջ կը գրէր. «Այո՛, Վեհափառ Տէր, խորունկ ցաւով վշտացած է սիրտս անբախտ հայոց չլքուած ու չտեսնուած կոտորածով»:

Հայ ժողովուրդը ինքնաճանաչման մղելու եւ անոր մէջ

հայրենասիրութիւն արթնցնելու համար ան պատկերեց բաւականին մեծ թիւով գեղանկարներ, որոնց մեծ մասը կը նուիրէր հայ եկեղեցիներու եւ բարեսիրական ընկերակցութիւններու. այդ գործերը ան կը ստորագրէր նաեւ հայերէնով, եւ ոչ թէ Այվազովսկի, այլ՝ Այվազեան: Օրինակ, «Նոյի էջֆը Արարատէն», «Հայ ժողովուրդի մկրտութիւնը», «Վարդան գորավարի երդումը», «Խրիմեան Հայրիկը էջմիածնի շրջափակին մէջ», եւ այլն: Այս վերջին կտաւը յատկանշական է: Յատկանշական է, որովհետեւ մեծ քնքշութեամբ կատարուած է: Իսկ այդ քնքշութիւնը աւելի շեշտուած է նկարին մէջ գոյութիւն ունեցող առաւօտեան ողորուած լոյսի թարմութեամբ: Լոյսը Այվազովսկիի արուեստին մէջ տիրապետող տարր է: Անոր ծովանկարները լոյսի (արեւի) տարբեր դրսեւորումներ են օրուան տարբեր ժամերուն. կարծես Այվազովսկին լոյսի կրօն է՝ ծովանկարիչ ըլլալէ առաջ: Լոյսի (արեւի) պաշտամունքը, լոյսի սէրը, լոյսի փառաբանումը բերեք խորթ շեն եղած հայ ժողովուրդի նկարագրին, սկզբաւ Մովսէս Նորենացիի մէջբերած Վահագնի ծնունդը նրկարագրող «Զկարմրիկն եղէգ-Յիկ»էն մինչեւ Շնորհալիի

«Լոյս արարիչ լուսոյն», «Առաւօտ լուսոյն» եւ Պարոյր Սեւակի «Եղիցի լոյս»ը:

Այվազովսկին բերեք շոտլանդացի թուրքին անմարդկային արարքները. ան նոյնիսկ օր մը թուրք սուլթանին զրկած աղամանդակուռ ոսկեայ շքանշանները իր շան վիզէն կապելով՝ շունը պտտուց ամբողջ քաղաքին մէջ, անցնելով նաեւ Թէոդոսիոյ թրքական թաղամասէն. անկէ ետք միայն հանրութեան առջեւ տարաւ ու նետեց ծովուն խորքը եւ ապա լուաց իր ձեռքերը, զայն մարդիկով թրքականութիւն խորհրդանշող ազատէն, որովհետեւ թրքական որեւէ բան չէր կրնար հանդուրժել իր տան մէջ: Իր կեանքի վերջին տարիներուն՝ 1895ի հայկական կոտորածներէն ետք, ան ըսկըսած էր շատ հակաթրքական կտաւներ նկարել: 1902 Մայիս 2ին, երբ կ'աշխատէր «Թրքական մաւրու պայքումը» գեղանկարին վրայ, նոյն գիշերը, առանց կարողանալու նրկարը աւարտել, կը դադարէր ապրելէ այս մեծ հայր եւ աշխարհի մեծագոյն ծովանկարիչներէն մէկը՝ Յովհաննէս Այվազովսկին:

Յովհաննէս Այվազովսկին թէեւ պատկերեց ծովու բազմաթիւ խաղաղ ու հանդիսատ պահեր, սակայն անոր արուեստի առանցքը կը կազմեն



«Տրապիզոնի ցարդը», գեղանկարը՝ Այվազովսկիի

ա. - Յովհաննէս Այվազովսկի. Աւագանի անունով Յովհաննէս Այվազեան, ծնած է 1817ին, Սեւ ծովու ափին գրտնրւող Թէոդոսիա քաղաքին

անսանձ, փոթորկալից տեսարանները, որոնց մէջ յաճախ ներկայ է բնութեան դէմ մաքառող անվհատ մարդը:

Մարդը ձուլելով հանդերձ բնութեան հետ, իրրեւ անոր մէկ մասնիկը, հեղինակը պայքարի կը մղէ զայն բնութեան տարերային ուժերուն դէմ. նման վիպականութեամբ յագեցած է «ԻՆՆերորդ ալիքը» կտաւը, ուր կ'երեւին ամբողջ գիշեր մը փոթորկալից ծովու դէմ կենաց մահու պայքար մը. զիկէ ետք փշրուած նաւու կայմին կառչած նաւարկեալներ, որոնց վրայ թէեւ կը խուժէ ամէնէն ուժեղ իններորդ ալիքը, սակայն հեռուէն իրենց յոյսը՝ արեւը ծագած է արդէն իր փառահեղ գեղեցկութեամբ, որ հանդարտութիւն կը խոստանայ ծովուն եւ որմէ կախեալ է նաեւ նաւարկեալներու կեանքը:

բ. - Փանոս Թերլեմեզեան.

Թերլեւ չկայ հայ արուեստագէտ մը, որ առաւել կամ նուազ չափով նպաստած չըլլայ հայ ազատագրական պայքարին: Անոնցմէ շատեր զէն ի ձեռին մասնակցած են նաեւ ազատագրական կռիւներուն, ինչպէս Չարենցն ու Բակունցը եւ կամ արուեստագէտ Խունուկները: Մակայն, Փանոս Թերլեմեզեանի պարագան եզակի երեւոյթ է, որովհետեւ ան արուեստն ու յեղափոխական գործը միաձուլեց իրարու եւ արուեստէն առաջ, կեանքի ամենագեղեցիկ եւ բեղուն տարիները նուիրեց հայ ազատագրական պայքարին:

Փանոս Թերլեմեզեան ծնած է 1865ին, Ալգեստանի (Վան) մէջ: Յաջողութեամբ աւարտելէ ետք Վանի Փորթուկալեան դպրոցը, ան կը զբաղի ուսուցչութեամբ, սակայն կարճատեւն մը ետք կը հեռացուի գոր-

ծէն, իրրեւ կասկածելի յեղափոխական: Ի տես հայ ժողովուրդի թշուառ վիճակին, կ'որոշէ նուիրուիլ հայ ազատագրական պայքարին եւ զինել երիտասարդութիւնը: Իր շուրջ հրաւիրելով խումբ մը հայրենանուէր երիտասարդներ, անոնք կը սկսին զէնքի եւ զինամթերքի փոխադրութեան վտանգալից գործունէութեան: Նոյն նպատակով անքանի մը անգամ կը մեկնի Պարսկաստան: Կարճ ժամանակ մը ետք, արդէն իսկ Վանայ շրջանի կարգ մը զիւղերը զինուած էին:

Թերլեմեզեանի երիտասարդական տարիներուն, Վանի ոստիկանապետ կը նշանակուի հայերէնին լաւագէտ տիրապետած եւ կարգ մը հայ մտաւորականներու հետ սերտ կապեր հաստատած Նուրի անունով թուրք մը, որ անմիջապէս կը սկսի ձերբակալութիւններու եւ բռնութիւններու: Կը բանտարկուին քանի մը տասնեակ ազգային գործիչներ, իսկ ուրիշներ կը հեռացուին իրենց գործերէն: Իր ընկերներուն օգնութեամբ, Փանոս Թերլեմեզեան կ'ազատուի Նուրին: Նուրիի մահէն ետք, Վանայ շրջանի կուսակալը աւելի կը սաստկացնէ բրտութիւններն ու հալածանքները եւ Թերլեմեզեան իր ընկերներուն հետ կը բարձրանայ լեռ՝ վարելով ֆետայական կեանք: Ամիսներ ետք, կը ձերբակալուի, սակայն վեց ամիս շանցած կ'ազատի փրկագինով: Կը մեկնի Պիթլիս, յետոյ՝ Մուշ, ուր 1889ին Ստեփան անունով երիտասարդի մը հետ կը փորձէ հիմնել թրքական լուծին դէմ պայքարող կազմակերպութիւն մը: Իր իսկ վկայութեամբ, մինչ այդ Մուշ քաղաքը ոչ մէկ յեղափոխական գործիչ այցելած էր: Մշոյ մէջ, ան կը կա-

տարէ յանդուգն գործեր, ինչպէս՝ օր մը պատահաբար փողոցին մէջ կը հանդիպի բունակալ պետական պաշտօնեայի մը եւ տեղն ու տեղը կը սպաննէ զայն: Թրքական պետութիւնը կը հետապնդէ զինք եւ ի բացակայութեան երկու անգամ մահուան կը դատապարտուի: 1893ին, երկու ընկերներու հետ կ'անցնի Պարսկաստան, ապա՝ Թիֆլիս, ուր կ'աշխատի

զինք կը տեղափոխեն Թիֆլիսի Մետելի բանտը: Հոն կ'ենթարկեն խոշտանգումներու եւ ապա հետիոտն կը փոխադրեն Երեւան: Երեւանի մէջ չեն կրնար ապացուցել իր յանցանքը, հարկադրաբար կ'աքսորեն զայն Պարսկաստան: Հոն կեղծ անցագիր մը ձեռք բերելով կը մեկնի Փարիզ, ուր դարձեալ Խորհեան Հայրիկի նիւթական օգնութեամբ իր



«Ֆետայիկ», գործ՝ Փանոս Թերլեմեզեանի

իրրեւ փայտահատ, զբաշար եւ կամ թերթի ցրուիչ:


1895ին, Թերլեմեզեան կը յաջողի մեկնիլ Փեթերսպուրկ, ուր կ'ընդունուի Գեղարուեստի Ակադեմիան: Սկզբնական շրջանին, ան կը մատնուի նիւթական նեղ կացութեան, սակայն նկատի առնելով փոքր տարիքին ցուցաբերած գեղանկարչական անոր բացառիկ ընդունակութիւնները, Խորհեան Հայրիկ մնայուն կրթաթոշակ կը յատկացնէ իրեն:

1897ին, երբ կարգ մը ընկերներու հետ հաստիս կը գտնուէր, թրքական կառավարութեան պահանջով ցարական ոստիկանութիւնը կը ձերբակալէ զինք եւ կ'արգելափակէ Ռեւելի բանտը: Ահաւասիկ հոս է, որ կը գծէ իր յայտնի ինքնանկարը, ուր զբսետուած է յեղափոխականի իր խառնուածքն ու հայրենասէր արուեստագէտի վճռակամութիւնը: Ռեւելի բանտին մէջ կը մնայ վեց ամիս, որմէ ետք

գեղանկարչական ուսումը կը շարունակէ Ժիւլիէնի Ակադեմիային մէջ:

1904ին, Թերլեմեզեան կը վերադառնայ Հայաստան, ուրկէ կը մեկնի Փարիզ, Եգիպտոս, Պոլիս, Կուստինա (ուր կը մտերմանայ Կոմիտասի հետ) եւ 1914ին, դարձեալ Վանի մէջ է, ուր կ'այցելէ Աղթամարի Մ. Խաչ եկեղեցին եւ կ'արտանկարէ անոր բարձրաքանդակները:

1915ին, Վանի ինքնապաշտպանութեան յայտնի հերոսամարտին իր գործօն մասնակցութիւնը կը բերէ զեկամար մարմինի մէջ ու կարեւոր դեր կը կատարէ նաեւ իրրեւ վարպետ նշանառու: Վանի անկումէն ետք, կ'անցնի Անդրկովկաս, ապա՝ Պոլիս, Իտալիա, Փարիզ, ուրկէ 1923ին կը մեկնի Մ. Նահանգներ, ուր հինգ տարի մնալէ ետք, կը վերադառնայ Խորհրդային Հայաստան, ուր կ'ապրի եւ կը ստեղ-



«Հայաստանի նուտեր», Փանոս Թերլեմեզեան

ծագործ է մինչև մահը՝ 1941 թ.:

Իր ազգն ու անոր մշակութային արժեքները պաշտպանելու համար, Փանոս Թերլեմեզյան դիմեց գէնքի ու ժին եւ ստեղծագործեց, մշակութային արժեքներ ստեղծելու եւ ազգային ազատագրական պայքարին նպաստելու համար:

Կրթոտ հայրենասիրութեամբ եւ մարդասիրութեամբ թաթառուն է Փանոս Թերլեմեզյանի արուեստը: Օրինակ, անոր «Հայկական նուոնր» պաստառին գոյները անհանդարտ վիճակի մէջ են, եւ շարժուն, գալարուող տերեւներու հետ պայքարի մը ազդանշանը կու տան: Հայկական նուոնրու վրայի ճեղքերը տակաւին ցաւոտ տեսք ունին, որոնց ընդերքէն կարծես արեան գալուստը կը կանխագուշակուի:

Այս բոլորը մեզի համար հասկընալի կ'ըլլան, եթէ նկատի առնենք հեղինակին տառապալից կեանքն ու անոր դէմ տարած պայքարը՝ ազգային գետնի վրայ. «Հայաստանի նուոնր» կտաւը հայ ազգային յեղափոխական շարժման թէ՛ ժամանակաշրջանին մէջ ապրած գիտակից, զգայուն հայու մը հոգեվիճակը կը փոխանցէ մեզի:

Թերլեմեզյանի հայու ճակատագրին հետ կապ ունեցող կտաւներուն մէջ առանցքային տեղ կը գրաւէ նաեւ «Մեմաւոր ծաղը»: Առանձին ծառ մը լրճափին, ծառացած կործանիչ մարիկին, անոր ճիւղերուն տերեւները որոշ շափով ենթակայ են զօրաւոր հողմին, սակայն անօգնական ծառին բունը հաստատ է, անյողողող, որուն արմատները մխրճուած են երկրի ընդերքը, պայքարի մէջ է ան բնութեան եւ ժամանակի դէմ, գոյատեւելու հաստատ վճռակամութեամբ, այնպէս՝ ինչպէս հեղինակը, հայ ֆեետային, հայ ժողովուրդը եւ կամ առհասարակ ճնշուած, բայց բունութեան դէմ մարտի ելած ժողովուրդները:

Գ.- Էտկար Շահին:

Շահինի մտերիմներէն գեղանկարիչ Ռ. Շիշմանեան կը վկայէ, թէ՛ «Շահինի մօտ հայրենասիրական զգացմունքները շատ զօրեղ էին. նա միշտ ցանկացել է, որպէսզի իրեն ընծայուած փառք ու պատուից լայն քաժին հասնի իր պատկանած ժողովուրդին»:

Այս պատճառով գիծի այս վարպետը, իր ողջ կեանքի ըն-

թացքին, իրրեւ քաղաքակրթութեան խարան երգեց թըրուոտութիւնն ու կեանքի դառնութիւնը: Անոր գծանկարներուն խորագիրներէն շատեր թելադրական են այս առումով, ինչպէս՝ «Զփաւոր մուրացիկը», «Հիւանդը», «Մուրացկան ծեր կիներ եկեղեցիին մէջ», «Անգործը», «Զորտահաւաք կիներ»...: Թէեւ Շահին պատկերեց նաեւ կեանքի դրական կողմերը, սակայն մեզի ծանօթ տասնեակէ մը աւելի հայկական թեմաներով գծանկարները առհասարակ մեր ժողովուրդի վիշտն ու դժբախտութիւնը ցոյացնող երկեր են: Հայկական շարքէն զուարթ տրամադրութեամբ պարուրուած է Շահինի միայն մէկ գրծանկարը, որ կը կոչուի «Ի՛նչ գեղեցիկ հայկական ֆիթ», ուր երկու իտալուհիներ հիացած եւ համակրանքախառն ժպիտով կը դիտեն տարիքը առած հայ կնոջ մը արծուաքիթը:

Շահինի հայկական բնոյթով գծանկարները կրնանք բաժնել երեք խումբի՝

ա.- Հայորդիներու դիմանկարներ,

բ.- Բովանդակութեամբ հայ կեանքին հետ առնչուող գծանկարներ,

գ.- Նկարագրողումներ:

Դիպաշարային բնոյթ ունեցող «Հայու տառապանքը եւ յոյսը» խորհրդանկարը լաւագոյնս կ'առնչուի Շահինի ապրած ժամանակաշրջանի հայ կեանքին հետ, ուր տառապանքը մարմնաւորուած է տառապեալ, ընկճուած ու պատրանաթափ հայուհիի կերպարով: Ուժաթափ է ան եւ որպէսզի գետին շտապալի, օգնութեան հասած է անոր յոյսը՝ հայ կտրիճը (գուցէ Վահագնը), որուն ինքնապատահ շարժումներն ու ջլապինդ եւ

ուժեղ մարմինը, ինքնին ինքնապատահութիւն եւ հաւատք կը ներշնչէ տառապեալին: Այնքան հմուտ է Շահին ու կենդանի՝ անոր գիծը, որ անոր կերպարներուն ներաշխարհին մէջ թափանցելը մասնաւոր ճիգ չի պահանջեր: Յոյսի կերպարը իր մէջ կը խտացնէ թէ՛ խղճահարութեան, թէ՛ վիրաւորուած ինքնասիրութեան, թէ՛ ցասման եւ թէ՛ մանաւանդ՝ վրէժի զգացողութիւններ: «Հայուն տառապանքը եւ յոյսը» գծանկարը սերունդները պայքարի մղող գեղարուեստական մնայուն երկերէն է:

Հայկական զարդանաշխարհին բնոյթ ունեցող Շահինի նկարագրողումները իրագործուած են համեմատաբար երիտասարդ տարիքին՝ իրրեւ բարեսիրական նպատակներու համար կազմակերպուած հանդէսներու ծրագիրներու ձեւաւորումներ, որոնցմէ կ'առանձնացնենք «Հայ որրուկներ» գծանկարը: Այս մէկը գծուած է Գրիգոր Զոհրապի խնդրանքով: «Հայ որրուկներ»ը երեք գրկեալներ են, որոնք կեանքի դժուարութիւնները առանձինն դիմագրաւելու կանխակալ հասունութիւն մը ունին, որ լաւագոյնս կը բնորոշէ հայ որրին պայքարելու վճռակամութիւնը: Տառապած են, բայց բոլորովին չեն խեղճացած կամ յուսալքուած, այլ, ընդհակառակն, նոյնիսկ պահած են իրենց պատուախնդրութիւնն ու ինքնասիրութիւնը:

Տառապանքի թեման տարածուած է Շահինի զանազան ստեղծագործութիւններուն վրայ: Ազգային դժբախտութենէն մեկնելով, Շահին կը թափանցէ համամարդկային

թշուառութեան ոլորտներուն եւ կը պատկերէ զանոնք ներքին կսկիծով ու յաճախ նաեւ ընդվզումով՝ դրսեւորելով կեանքի դաժան իրականութիւնը:

Եզրակացնելու համար, մէջբերենք Շահինի գործերուն եւ կեանքին լաւապէս ծանօթ



«Հայ որրեր», գործ՝ Էտկար Շահինի

Ֆրանսահայ Հայկ Աղանբեկեանի վկայութիւնը:

«Շահինը մէկն էր ստեղծագործ հայ ցեղի գաւակներէն, որ իր տաղանդով եւ գծելու հմտութեամբ պատիւ բերած է ազգին եւ միջազգային արժեքով արուեստագէտ մնացած է»:

Գ.- Նունուկ գերդաստանը:

Ծանօթ է, թէ կեանքի անպահովութեան ատեն, պատերազմներու մէջ, առաւելաբար մեծահարուստներն են, որ կը լքեն իրենց երկիրն ու ժողովուրդը, կ'ապաստանին հեռաւոր ու ապահով վայրեր: Նունուկներու միլիոնատէր գերդաստանը, սակայն, պայծառ բացառութիւն մըն է այս ընդհանրական իրողութեան մէջ: Դարասկիզբի կովկասեան քաղաքական անկայուն կացութեան եւ թոհուրոհին մէջ, անոնք ո՛չ միայն չլքեցին իրենց ժողովուրդն ու երկիրը, այլեւ հայրենիքի ու ազգի փրկութեան համար շտապեցին ռազմաճակատ՝ կոտելու մեր դարաւոր թշնամիին դէմ, յաճախ առաջին գիծի վրայ:

Նունուկները, հանդերձ գերդաստանով, թէ՛ հանրային գործունէութեամբ, թէ՛ վրձինով եւ թէ՛ զէնքով, ամբողջականօրէն մասնակցած են ազգային-ազատագրական պայքարին եւ երբեք պատահական



«Հայուն տառապանքը եւ յոյսը», Էտկար Շահինի

չէ, որ ժամանակին Թիֆլիսի մէջ հրատարակուող «Տարագ» հանդէսը յատուկ յօդուած մը գրէր իրենց մասին, «Ղարաբաղի միլիոնատէրները ռազմաճակատում» խորագրով: Խուսուցանողները, ամենայն իրաւամբ, արժանի են հայ պատմաբաններու ուշադրութեան. անոնցմէ՝ Գուրգէն Խուսուցանողը, 1915ին թուրքերու դէմ կոտորելով եւ գլուխէն վիրաւորուելով, կը դատապարտուէր ցկեանս անդամալուծութեան՝ մարմնի աջ կողմով, իսկ կրտսեր եղբայրը՝ Երուանդը, 1920ի քեմալական բանակներու դէմ կռուի ատեն, անդարձօրէն կ'անհետանար:

Հին վարպետները արհեստի ու արուեստի հանդէպ ունեցած իրենց սէրն ու հմտութիւնը սերունդէ սերունդ կը փոխանցէին իրենց յետնորդներուն: Այսպէս, ինքնաբերաբար կը ստեղծուէին այս կամ այն արհեստի կամ արուեստի

մէջ նշանաւոր գերդաստաններ: ԺԹ. դարուն, Ախալցխայի մէջ իրրեւ հմուտ սակերիչներ նշանաւոր էին Կոջոյեանները: Վանի մէջ, այլ վարպետներու կողքին, իրրեւ նշանաւոր երկաթագործներ կը յիշուին Բերբերեանները, իսկ ճարտարապետական մարզին մէջ՝ Պոլսոյ Պալեանները: Գեղանկարչութեան պարագային, ամէնէն շատ յայտնի են Յովնաթանեանները, որոնք դիմանկարչական իրենց դրպորոցը ստեղծեցին: Կան նաեւ Բաթրէուք-Մելիքեաններու եւ Էլիբէկեաններու նման այլ ընտանիքներ, որոնք տուած են առնուազն քանի մը յայտնի արուեստագէտներ:

Ասոնցմէ էր Խուսուցանող գերդաստանը:

Իրենց ժամանակին մամուլի մէջ բաւական արձագանգ գրտած՝ Խուսուցանողները ապա երկար ժամանակ մոռացութեան մատնուեցան մեր իրականութեան մէջ: Այսպէս, այսօր

իսկ, «Հայկական սովետական հանրագիտարանը» ոչ մէկ Խուսուցանողի անուն կը յիշատակէ: Նոյնը՝ Գառնիկ Ստեփանեանի «Կեանագրական քառարան»ի Բ. հատորը, (Երեւան, 1981): Դանիէլ Բզնունիի կազմած «Հայ կերպարուեստագէտներ» (Երեւան, 1977) համառօտ բառարանը միայն կ'արձանագրէ Միքայէլ Խուսուցանողի անունը, անոր մասին տալով ժլատ տեղեկութիւններ:

1981ին էր, որ հայրենի արուեստաբան Վահան Յարութիւնեան առաջին անգամ վերայայտնաբերեց ու վերագնահատեց Խուսուցանողները, անոնց մասին ստորագրելով երկու յօդուած «Սովետական Հայաստան» ամսաթերթի 4 եւ 5 թիւերուն մէջ: Ասոնցմէ կ'իմանանք, որ «Մնացական Խուսուցանողի օթ տղաներից վեցը եւ երկու դստերից մէկը զբաղուել են նկարչութեամբ, որ՝ նկարչուի է Միքայէլ Խու-


սուցանողի դուստրը եւս, եւ այդ մեծ գերդաստանը սփռուել է աշխարհով մէկ, հանգրուանել Հայաստանում, Ֆրանսիայում, Շուեդիայում, Ա. Մ. Ն. ում»:

Պարագաներու բերումով եւ հարկադրաբար «աշխարհով մէկ» ցրուած այս արուեստագէտ գերդաստանին ամէնէն կարկառուն դէմքը Միքայէլ Խուսուցանողն է, որ ծնած է 1883ին, Շուշի: Ծարտարապետական ուսումը կը ստանայ Քիւրեի համալսարանին մէջ, զոր կ'աւարտէ 1912ին: Այնուհետեւ, երկու տարի եւս Տրէգտէնի մէջ գեղանկարչական դասընթացքներու հետեւելէ ետք, կը վերադառնայ Թիֆլիս, ուր կ'աշխատի իրրեւ գեղանկարչութեան ուսուցիչ: Զուգահեռաբար կը տանի հասարակական եւ մշակութային անխոնջ գործունէութիւն:

Հայկական կոտորածները խորապէս կը ցնցեն զինք. ան-








ՄԵԼՔՈՆԵԱՆ ՀԱՍՏԱՏ.



- ELECTRIC MOTORS
- REDUCTION GEAR
- MOTORS A. C. & D. C.
- REDUCTION GEARS
- VACUUM PUMPS
- WATER PUMPS
- POWER TOOLS
- ELECTRIC WINCHES
- PNEUMATIC WINCHES
- STAINLESS ELECTRODES

- PNEUMATIC
- DIRECTIONAL VALVES
- SOLENOID VALVES
- HYDRAULIC
- DIRECTIONAL VALVES
- SOLENOID VALVES
- RELIEF VALVES
- PUMPS & PISTONS



ԵՒ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԻՏՐՕԼԻՔ, ՓՆԷՕՄԱԹԻՔ ՈՒ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՄՈԹՇՕՐՆԵՐ, ՄԱՏՁԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ:

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ, ՍԱՆԹՐ ՊԼԱՆՔՕ, ՀԵՌ. 483740 / 582507

միջապէս կը կազմէ եւ կը ձեւաւորէ «Գաղթականական ալպոմ»ը, որ «Նոյնի շրջանի ցնցող փաստաթղթերից» է: Միջբայէլ խոսնունցը հետագային պարբերաբար կ'անդրադառնայ Նոյնի թեմային, ու կ'երկնագրէ հայկական ջարդերը բնութագրող ցնցիչ գեղանկարներ, որոնցմէ ոմանք կը տպագրուին «Տարագ»ի մէջ: Տխուր ու սրտաճմլիկ գեղանկարներու կողքին՝ կը նրկարէ նաեւ նոր յոյս ու հաւատք ներշնչող կտաւներ, որոնցմէ են՝ «Դէպի նոր կեանք», «Վերածնունդ Հայաստան» երկնագիրները, արդէն թելադրական ու խօսուն՝ իրենց խորագիրներով:

«Վերածնունդ Հայաստան» գծանկարը, Հայաստանի աւերներէն ու հայ ժողովուրդի սպանդէն ետք՝ կու գայ աւետելու նոր, շէն ու յուսալի հայրենիքի մը ազատագրումն ու անկախութիւնը: Գծանկարին ձախ կողմը փառահեղ արեւը Արարատի վրայէն նոր Լոյս կը սփռէ Հայաստանի տարածքին, իսկ ձախ կողմը, առաջին փլանի վրայ, հայուհին, կենսունակ արտայայտութեամբ, գոյատեւելու վճռակամութեամբ կը նայի դէպի ապագան:

Միջբայէլ խոսնունցը նաեւ վարպետ ծաղրանկարիչ էր. սակայն անոր գործերուն մէջ առաւելաբար աչքի կը զարնեն հայկական հեքիաթներու նկարազարդումները, որոնց մէջ ակներեւ է հեքիաթային միջավայրի, հեքիաթային կերպարներու, հեքիաթային գուներանգներու յաջող ստեղծումը: Միջբայէլի թէ՛ հեքիաթներու նկարազարդումներուն եւ թէ՛ այլ գործերուն մէջ ընդհանրապէս առատօրէն օգտագործուած են հայկական զարդանախշերը, որոնք ազգային երանգ ու դիմագիծ կը հաղորդեն անոր երկնագիրներուն:

Հակառակ անոր, որ Միջբայէլի ծնողները ստիպողաբար պիտի մեկնէին Փարիզ, փրկելու համար վիրաւոր եւ անդամալոյծ Գուրգէնը, ինք կը մնար թիֆլիս, կ'ապրէր եւ կը ստեղծագործէր հոն մինչեւ մահը (1931):

Իր եղբայրը՝ Գուրգէն, թէ՛ եւ անբուժելիօրէն կէս-անդամալոյծ, ո՛չ միայն շարունակեց գծանկարչութիւնը՝ ձախ ձեռքով ստեղծագործելով, այլեւ զբաղեցաւ նաեւ փորագրութեամբ, ստեղծելով այնպիսի մատենանշաններ (Ex Libris), որոնք նրբօրէն աշխատեցուած, գողտրիկ ու բովանդակալից գծանկարներ են

ու երբեմն նոյնիսկ լայնածաւալ դիպաշարային բովանդակութիւն ունեցող կտաւներու տպաւորութիւնը կը ձգեն: Ինչպէս օրինակ՝ իր անձնական մատենանշանը, որ ինքնակենսագրական բնոյթ ունի, եւ ուր հեղինակը տարբեր խորհրդանշական կերպարներու եւ նշաններու միջոցով տառապալից բայց միշտ յոյսով լեցուն ու լաւին ձգտող իր կեանքը կը պատմէ մեզի:

Ե. - Սարգիս Խաչատուրեան.

Սփիւռքահայ իրականութեան մէջ օտարները յաճախ փորձած են սեփականացնել մեր արժէքները, որոնց կարգին՝ գեղանկարչներ, ինչպէս՝ Այվազովսկի, Եակովլով, Արչիլ Կորքի-Ատոյեան եւ ուրիշներ:

1930ական թուականներուն նոյնը պատահեցաւ Սարգիս Խաչատուրեանի պարագային, երբ Եւրոպայի տարբեր ուտաններուն մէջ ան ցուցադրեց իր պարսկական որմնանկարներուն պատճենահանումները: Եւրոպական կարգ մը թերթեր յամառօրէն զայն անուանեցին պարսիկ գեղանկարիչ, առանց որեւէ տեղ յիշելու անոր հայկական պատկանելիութիւնը, կամ հայկական կերպարուեստին բերած անուրանալի նպաստը:

Սարգիս Խաչատուրեանի արուեստին մասին խօսելու համար, հարկ է անոր կեանքն ու գործունէութիւնը բաժնել երեք շրջաններու: Այդ շրջանները այնքան զատորոշ են իրարմէ, որ առանց վարանումի կարելի է անուանել զանոնք՝

- Ա. - Հայկական,
- Բ. - Պարսկական,
- Գ. - Հնդկական:

Իսկոյն պէտք է ընդգծել, որ Սարգիս Խաչատուրեանի արուեստին հիմքը միշտ կը մնայ հայկականը, նոյնիսկ երբ պարսկական կամ հնդկական որմնանկարներ կը պատճենահանէր ան: Այս վերջիններուն մէջ ղենելով հանդերձ պարսիկ եւ հնդկիկ ժողովուրդներու եւ խառնուածքն ու ոգին՝ մարդկային գեանի վրայ, այնուհային գեանի վրայ, այնուամենայնիւ, արուեստի հանդէպ ունեցած մօտեցումն ու արուեստի արժէքներ փրկելու իր նախանձախնդրութիւնը իր անպայման կը մատնեն իր անպարտական, տանջուած, ըստ գաղթական, տանջուած, ըստ պանդ տեսած հայուն ապրումները: Բոլոր պարագաներուն, նոյնիսկ իր լաւատես ու զըւարթ գործերուն մէջ, տարագիր հայու թախծալի վիճակներ կը փոխանցուին դիտողին:

Սարգիս Խաչատուրեան ծնած է Մալաթիա, 1886ին, կօշկակարի համեստ ընտանիքի մը յարկին տակ: Հայրը Թաւրիզէն էր, իսկ մայրը՝ բնիկ Մալաթիացի: Ուսման համար պատանին կը դրկուի Կարնոյ Սանասարեան վարժարանը, զոր փայլուն յաջողութեամբ աւարտելէ ետք, կը մեկնի Եւրոպա (Հռոմ, Զուրիցերիա, Փարիզ)՝ գեղանկարչութեան մէջ հմտանալու: Եւրոպայի մէջ թափառական կեանք մը անցընելէ ետք, երիտասարդ Խաչատուրեան կը վերադառնայ հայրենիք եւ 1915ին ու հետագայ դէպքերուն կը բաժնէ մեր ժողովուրդին վիճակուած բոլոր վերիվայրումները:

Արարատի շուրջին՝ արեւմտահայ գաղթականներու դառն վիճակը շատ կը յուզէ զինք եւ կը սկսի նկարել անոնց կեանքը: Այս գործերը հետագային ցուցադրեց տարբեր քաղաքներու (Պոլիս, Գահիրէ, Վիեննա, Փարիզ, Լոնտոն, Պրիւքսէլ, Ամսթերտամ, Եւայլն) մէջ՝ գեղարուեստական յագեցուածութեամբ աշխարհին ցոյց տալով հայ ժողովուրդին դէմ գործադրուած ոճիրին շարունակութիւնը: Ցուցադրուած նկարներուն մէջ յատկանշական էին գաղթականներու կենցաղէն առնուած կեանքի պատկերները, կիներու եւ մանուկներու տիպարներ, որոնք արհաւիրքներէն ճողոպրած ժողովուրդի մը շարժարանները կը բնութագրէին. օրինակ, «Պատուարեալները կ'երթան հաց քերելու», «Որքերը ճաշի կը սպասեն», «Որքերին՝ հիւսելու ատեն», «Լուացարարուհիները», Եւայլն: Ան մասնաւոր ուշադրութիւն կը դարձնէր զգեստներու թափթփած ձեւերուն եւ գունաթափուներուն, մանրամասնօրէն նկարելով զանոնք, որպէսզի կարենայ առաւել եւս ցայտուն դարձնել ծագումնաբանական կերպարները, անոնց ապրած վիշտն ու վերապրելու եւ գոյատեւելու կամքը: Այս առումով յատկանշական են հետեւեալ կտաւները. - «Սասունցի կիները», «Բաւեցի երիտասարդ կիներ», «Մշեցի տարագիրը», «Սասունցի 90ամեայ կիներ», Եւայլն: Երկնագրողը իր կերպարներուն դէմքի (մասնաւորապէս աչքերուն) արտայայտութեան, հագուստներու եւ միջավայրի միջեւ հոգեվիճակի եւ տրամադրութեան նոյնութիւն մը կը ստեղծէր, ինչպէս, օրինակ, շատ մը տեսարաններու մէջ, գաղթականները

միջնադարեան (երբեմն կիսաքանդ) հայկական յուշարձաններու, եկեղեցիներու, վանքերու հետ, կապ մը հաստատելով անոնց լքուած ճակատագրին ու իրենց հողը, տունը, հայրենիքը կորսնցուցած հայուն միջեւ: Այս բոլորը կը ներկայացուին «Աւերակներու մէջ» եւ նոյնաբնոյթ այլ բազմաթիւ պատմաներու ընդմէջէն:

Սարգիս Խաչատուրեան միայն գաղթական հայութեան արուեստները («Տանջանք», «Յուսահատները», «Գաղթական կիներ», «Ուղեկորոյսները») չէր պատկերեր, այլեւ, նկատի առնելով հայու ամուր, տոկուն ու կենսասէր խառնուածքը՝ կը շրջէր գաղթականներուն մէջ ու կը նկարէր նոյնիսկ անմիթար վիճակի մատնուած, այլ կեանքի հանդէպ յոյսով լեցուն անոնց որախ պահերը, ինչպէս՝ «Տօնական օր Սեւանի ափին», «Հայ գեղջկական նշանուէր», «Խրախնամ Ծաղկանի մէջ», «Պարը», Եւայլն:

Սարգիս Խաչատուրեանի բարանգապնակը (վառ կարմիրը, ծիրանին, նարնջագոյնի զարնող դեղինը, կարմրաուռ մանուշակագոյնը) եւ ձեւերու ոճաւորումը կ'առնչուին՝ ինչպէս Հայաստանի բնութեան, նոյնպէս եւ Հայաստանի մանրանկարչութեան:

Գ. - Արշակ Ֆէթվաճեան.

1919 թուին Փարիզի արուեստասէր հասարակութիւնը կը խօսէր գեղարուեստական նոր երեւոյթի մը մասին: Ծարտարապետութեան պատմութեան մէջ նոր էջ կը բացուէր Ֆրանսացի գիտնականներուն առջեւ, որոնք կը զարմանային, թէ մինչեւ հիմա ոչինչ գիտէին հայկական ճարտարապետութեան մասին. ասոր հետ մէկտեղ կը խօսուէր Արշակ Ֆէթվաճեան անուն նրկարիչի մը մասին, որ ո՛չ միայն նոյնութեամբ կը նկարէր հայկական ճարտարապետական հին կոթողները, այլեւ՝ այդ նկարներուն մէջ կը դնէր իր սէրը, իր նուիրումը, իր անհատական գուրգուրանքն ու իր հոգածու վերաբերմունքը այդ հոյակապ կոթողներուն հանդէպ:

Վերոյիշեալ հետաքրքրութեան պատճառը այն էր, որ 1919 թուականին, երբ Արշակ Ֆէթվաճեան Անկախ Հայաստանի պետութեան կողմէ կը դրկուէր Փարիզ՝ հայկական դրոշմաթուղթեր պատրաստելու համար, հոն, ի միջի այ-

լոց, կը ցուցադրէր իրեն հետ տարած հայկական ճարտարապետութեան նուիրուած կտաւները, աշխարհահռչակ Լուսլր թանգարանին ցուցասրահին մէջ:

Փարիզի մէջ իր գործերը աւարտելէ ետք, Ֆէթվաճեան կը մեկնի Լոնտոն. հոն եւս կը ցուցադրէ վերոյիշեալ կտաւները, միեւնոյն ատեն դասախօսութիւններ տալով հայ ճարտարապետութեան մասին, իր խանդավառ մօտեցումով կը վարակէ նաեւ Լոնտոնի գեղարուեստասէր հասարակութիւնը եւ հետագային իր առաքելութիւնը կը շարունակէ եւրոպական այլ քաղաքներու եւ յատկապէս Ամբրիկայի մէջ:

Այս տաղանդաւոր եւ հայրենանուէր նկարիչը ծնած է 1866 թուին, Տրապիզոն: Նախնական կրթութիւնը կը ստանայ տեղւոյն Ազգային վարժարանին մէջ եւ 1887ին կ'աւարտէ Պոլսոյ կայսերական գեղարուեստի վարժարանը: Նոյն թուին կ'երթայ Հոմ Եւ կը յաճախէ Սան Լուիս գեղարուեստից ակադեմիան:

1897ին կը մեկնի Վիեննա, կը զբաղի դիմանկարչութեամբ: Անկէ ետք կ'երթայ Փեթերսպուրկ, ուր կը մնայ ութ տարիներ եւ հոս է, որ ինքզինք կը հաստատէ որպէս տաղանդաւոր նկարիչ եւ հասարակութիւնը իր արժանի գնահատանքը կու տայ անոր:

1900ին, Թիֆլիսի մէջ կու տայ իր առաջին ցուցահանդէսը՝ հայ ճարտարապետութեան մասին, որմէ ետք, յատկապէս Անկախ Հայաստանի Հանրապետութեան շրջանին, իրեն համար յաւելեալ հնարաւորութիւններ կը ստեղծուին պետութեան կողմէ, որպէսզի առաւել շափով կարենայ իր տաղանդը դրսեւորել, նկարելով յատկապէս ճարտարապետական հնագոյն կոթողները, կը շրջի (առաւելաբար Արեւելեան) Հայաստանի մէջ, ամենայն համբերատարութեամբ կը նկարէ Հայաստանի ձորերուն, ծերայերուն մէջ երբեմն լքուած ու կիսաւեր պատմական յուշարձանները, միեւնոյն ատեն մանրագնին կերպով ուսումնասիրելով գանոնք՝ մասնագիտական մօտեցումով: Ան ա'յնքան կը հըմտանայ հայկական ճարտարապետական գիտութեան մէջ, որ նոյնիսկ քանի մը եկեղեցիներու վերականգնումն ու նորոգումը կը վստահին իրեն:

1922ին, Ֆէթվաճեան Ամբրիկա կը մեկնի եւ հոն իր ամբողջ կեանքը կը նուիրէ, տար-

բեր քաղաքներու մէջ, հայկական ճարտարապետութիւնը ցուցադրելու եւ միեւնոյն ատեն նոյն նիւթին շուրջ դասախօսութիւններ տալու վեհ նըպատակին:

Ֆէթվաճեանի մասին թէ՛ հայկական եւ թէ՛ օտար մամուլը բազմիցս անդրադարձած է ժամանակին եւ տուած՝ իր արժանի գնահատանքը:

Ֆէթվաճեան ո'չ միայն կը համարուի հայկական ճարտարապետութեան յայտնագործողներէն ու վերածնողներէն մէկը, այլեւ կը նկատուի գոյներու վարպետ մը. հմուտ նրկարիչ մը ըլլալէ բացի, ան նաեւ քնարական խոսնուածքով



«Սասունցի կիմը», գեղանկարը՝ Արշակ Ֆեթվաճեանի

նուրբ արուեստագէտ մըն է, որ երբեք չորութեամբ չի վերարտադրեր իր այնքան սիրած պատմական կոթողները, այլեւ՝ իւրաքանչիւր կոթողի համար կ'ընտրէ իրեն յատուկ միջավայր ու մթնոլորտ: Իր նրկարած կիսաւեր յուշարձանները կարծես ճիշ մըն են մարդկութեան դէմ, որոնք իրենց վերականգնումն ու արդար գնահատումը կը պահանջեն: Եւ ի գուր չէ, որ Անկախ Հայաստանի պետութիւնը իրեն կը վստահէր հայկական դրամանիշներու եւ դրոշմաթուղթերու նկարազարդումը:

Ա. Ֆէթվաճեան առաւելաբար թէ՛ եւ ծանօթ է իբրեւ հայկական ճարտարապետութեան կիսաքանդ կոթողները երկնազրած եւ օտարներուն ծանօթացուցած արուեստագէտ, սակայն նուազ տաղանդաւոր չէ նաեւ իբրեւ դիմանկարիչ: Իր դիմանկարներէն շատերը նաեւ ունին մեր ազգային ճակատագրին հետ կապուած խորհրդանշական արժէք: Այս տեսակի գեղանկարներէն են «Գրիգոր Նարեկացի»ն եւ

«Սասունցի կիմը», որոնք արտաքինապէս իրարու ներհակ թուելով հանդերձ, ներքինապէս իրարու կապուած են եւ գիրար կ'ամբողջացնեն: Այսպէս,

Առաջինը կը խորհրդանշէ՝ Հայ ժողովուրդի դարաւոր եւ նուիրագործուած տառապանքը, իսկ երկրորդը՝ այդ տառապանքէն յառնած ըմբոստ եւ սրբազան ոգին:

Գրիգոր Նարեկացիի կերպարին մէջ Ֆէթվաճեան խտացուցած է հայ ժողովուրդի այն տառապանքը, որ պատահական բնոյթ չունի, այլ կու գայ մեր ազգային բարոյականութիւնն ու արժանապատուութիւնը բարձր պահելու եւ

պայքարը արտաքին բնոյթ ունի, ապա Ս. Գրիգոր Նարեկացիի տառապանքն ու ճենճերը ներքին բնոյթ ունին: Նարեկացին կը կուռի իր մէջ կուտակուած աղտեղութեանց եւ յուր ցանկութիւններու դէմ, իսկ սասունցի կիմը կը մարտնչի իր անձէն ու ազգէն դուրս գտնուող թշնամիներուն դէմ: Մէկը կ'ուզէ սրբանալ եւ իր ներքին մաքրութեամբ հասնիլ Աստուծոյ, իսկ միւսը, իր ներքին մաքրութեամբ զինուած՝ կ'ուզէ ոչնչացնել աղտեղութիւնը, պահելու համար կեանքը ապրելու իրաւունքը եւ հասնելու համար իր ազգային ազատութեան:

Եղեռն տեսած եւ իր ժողովուրդի դառն ճակատագրին ենթարկուած այս մեծ արուեստագէտը կերտած է երկու անգուղական կտաւներ, որոնք շատ աւելի խորացման եւ լայն վերլուծման կը կարօտին:

Այս ցանկը ամբողջական չէ անշուշտ: Կարելի է յիշել նաեւ Հայաստանի Անկախ Հանրապետութեան զինանշանի գոյգ հեղինակներէն մէկը՝ Յակոբ Կոչոյեանը, Հայաստանի Անկախ Հանրապետութեան շրջանին գործած հնութեանց պահպանութեան կոմիտէի գործօն անդամներէն Եղիշէ Թաղեւոսեանը եւ կամ Թիֆլիսի մէջ ապրած եւ ստեղծագործած երգիծանկարիչ Վանօ Ոսմարեկեանը, որ հայ գաղթականներու եւ որբերու կեանքը պատկերեց շարք մը գծանկարներով՝ (ինչպէս՝ «Գաղթականները աղբիւրի մօտ», «Գաղթականները կայարանում», «Որբանոցի դպրոցի շէնքում», «Որբերը ճաշ են ստանում») որոնց խոր եւ ներազդեցիկ ողբերգականութիւնը զայրոյթով կը լեցնէ դիտողին հոգին:

Այսպէս, միւս արուեստագէտներուն զուգահեռ, յեղափոխական գաղափարի տարածման եւ Հայաստանի Անկախ Հանրապետութեան կերտման մէջ իրենց զգալի նպաստը բերին նաեւ հայ գեղանկարիչները:

Մ. ՄԻՐԱՆԻ

Եթէ սասունցի կիմը մղած